

այս պատկերագրութիւնը՝ արծաթի վրայ կիտուածով, Շարակնոցիս գրչութեան ժամանակէն իսկ: Հոգեզայտեան պատկերագրական այս շարադրութիւնը Հայ մանկարչութեան մէջ տարածուած էր արդէն ժԳ. դարու վերջերը, ժԵ. դարու կեսուն արդէն գաղաթնակէտին կը դառնուէր, ժԶ. դարուն գրեթէ լքուեցաւ: Հոգեզայտեան այս խմբաւորումը եւ պատկերացումը հաւանաբար չենք կրնար հայկական յղացում նկատել:

Գրան պատկերագրութեան ճիշդ կէսին, Հոգին Սուրբ պատկերացնող աղանձին գլխուն երկու քովերը քառանկին յատակի վրայ կան երեքական փակագիրներ, Առաքեալներու գլուխներուն վերեւ: Գարեգին Կաթողիկոս կ'ըսէ. «Այստեղ երկու կողմից նկատուած են փակագրով տառեր, որ առայժմ լուծել չենք կարողացել» («Անահիտ», էջ 38ր.):

Քանի որ երկար յիշատակարանը արդէն չիշուած անուն չէ թողուցած, կրնանք խորհիլ որ այս փակագիրները Առաքեալներուն անուններն իսկ ըլլան, եւ դատելով նկարէն՝ գուցէ կարելի է պարզել Փիլիպոս, Անդրէաս, Պետրոս, իսկ հանդիպակաց կողմը՝ Յովիաննէս, Յակոբոս, Թադէոս:

Ոչոք վարդեակ մը կը դրաւ այս միափեղկ դրան ստորին մէկ-երրորդը: Բարդու գեղեցիկ, նոյնպէս հայկական արուեստի սքանչելի նմոյշ մըն է: Բուն դրան կեդրոնական այս մասը շրջանակուած է յիշատակարանով, որ արդէն ներկայացուցինք: Ասկէ յետոյ խաչքարածեւ խաչաքանդակի, ձեռագրական մանրանկարչական ծաղկումի եւ քարաքանդակ արուեստի հիւսկենկարի տարրերակներով երկու համանման ուղղահայեաց դասեր հեծած են աւելի նեղ եւ աւելի պարզ հիւսկենկար ստորին գօտին վրայ:

Գուռ ունի նաեւ գեղեցկաքանդակ շրջանակ մը: Այս շրջանակը անտարակոյս իր արուեստով եւ փորագրական վարպետութեամբ կը տարբերի դռնէն: Շրջանակի ճակտի դժարուեստը մեղի շատ կը յիշեցնէ Ախթարայի քանդակագործերուն ձեւերը

ԺԱ.—ԺԲ. դարէն: Շրջանակին ուղղածից դասերուն վերի կէսերը գրաւուած են վեցական դուրս ցցուած աղամանդածեւ զարդարանքներով, որոնք հիւսկենկար խաչածեւերով զարդարուած են: Արտայայտուելու այս ոճը մահմետական արուեստին մէջ ալ ծաւալած կը դառնայ: Հայկական արուեստին մէջ դռնէ ժԳ. դարու խաչքարերու վրայ կը հանդիպինք այս ցցաքանդակ ոճին: Պատճառ մը չկայ չխորհելու որ այս ոճը Հայ քանդակագործները արդէն ժԲ. դարուն սկսած էին կիրարկել: Սեւանի դրան այս շրջանակը իր այս զարդարանքներուն ծաղկումներուն մէջ շահեկան տարրերակներ ունի, որոնք նշանակալից հնութիւն մը ցոյց կու տան համեմատաբար ուրիշ խաչքարերու վրայ իմ տեսածներէս:

Վերջապէս շրջանակին այս ուղղածից դասերուն ստորին կէսերուն փորագրութիւնը կը ներկայացնէ զարդածեւ մը, որուն արդէն նմանը տեսանք Անիի գրակալին վարի մասին վրայ: Այդ գրակալը, որուն մասին հոս աւելի առաջ խօսեցանք, ինչպէս ըսի 1164 թուականէն էր Քրիստոսի, այսինքն ժԲ. դարէն:

Այս բոլորը նկատի առնելով կ'եզրակացնեմ որ Սեւանի դրան արտաքին շրջանակը միափեղկ դրան շինութենէն, 1486էն, երեք հարիւր տարի առաջ շինուած կրնայ ըլլալ: Այս շրջանակը կրնանք ապահովաբար ժԲ. դարու դործ նկատել: Շրջանակը անտարակոյս ունեցած ըլլալու էր 1486ին շինուած միափեղկ դռնէն աւելի հին դուռ մը, որ գուցէ նոյնպէս նորոգուած էր Յովհաննէս հիւսկեն, երբ ան կը նորոգէր Սեւանայ վանքին միւս դուռը 1176ին: Գուցէ այդ ատեն շինուեցաւ Սեւանի Առաքելոց վանքին 1486էն դրան այս հին շրջանակը: Դատելով լուսանկարներէն, որոնք դժուար թէ բաւեն վերջնական եզրակացութեանց համար, Սեւանայ Առաքելոց վանքին դրան այս շրջանակը իր զարդածեւերէն հետեցրնելով հաւանական է որ փայտափորազրուած ըլլայ Յովհաննէս հիւսկեն իսկ, 1176-ին կամ ատոր մօտ ատեն մը: